



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ԳՅՈՒՄՐԻԻ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ԶԲՈՍԱՅԳՈՒ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության

նախնական գնահատման հայտ

**ԵՐԵՎԱՆ**

**2020**

# Բովանդակություն

Հապավու մներ.....	3
ԸՆԴՆԱՆՈՒՄ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ.....	4
1. ՆԵՐՄՈՒԹՅՈՒՆ.....	5
1. ՇՐՋԱԿԱՄԻՋԱԿԱԿԱՆ ՎՐԱԱՊՈՒՅՄՈՒԹՅԱՆ ԳԱՋԱՏԱՆ ԱՌՏԵՑՈՒՄ ԵՎ ՍԵՂՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	7
1.1. Շրջակամիջակայքի վրասպառնալից լուծում գնահատման նպատակը .....	7
1.2. Շրջակամիջակայքի վրասպառնալից լուծում նախնական գնահատման հայտի հաշվետվություն կազմելը ....	8
1.3. Շրջակամիջակայքի վրասպառնալից լուծում նախնական գնահատման հայտի մեղադրամատյան լուծումը .....	8
2. ՇՐՋԱԿԱՄԻՋԱԿԱԿԱՆ ՎՐԱԱՊՈՒՅՄՈՒԹՅԱՆ ԳԱՋԱՏԱՆ ԱՌՏԵՑՈՒՄ ԵՎ ՍԵՂՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	9
3. ԱՌՏԵՑՈՒՄ ԳՐԱՅԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԿԱԿԱՆ.....	17
3.1. Ծրագրի իրականացման վայրը.....	17
3.2. Զբոսայգու գոյություն ունենալը վիճակի նկարագրությունը .....	20
3.3. Բարեկամություն ունի» զբոսայգու վերականգնման և զարգացման նպատակները .....	21
3.4. Նախատեսվող գործունեությունը և այլ ընթացակարգեր .....	25
3.5. Վերականգնման աշխատանքների շրջանակը՝ Փուլ 1 .....	26
3.5.3. Դիմադրական աշխատանքների կազմակերպում .....	29
4. ԵԼՔԵՐԻՆ ԲԱՄՈՒՆՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ.....	33
4.1. Տեղանքի ուղիղ ինքնակազմակերպությունը .....	33
4.2. Կլիմայի անվտանգ մասնակցի հսկողական նկարագրությունը .....	34
4.3. Այն ամիսը բնութագրելը.....	34
4.4. Պատմական կառույցներ և բնությունը և այլ հատուկ պահպանվող տարածքներ .....	35
4.5. Օդային անվտանգություն.....	35
4.6. Զբոսայգու համակարգեր.....	37
4.7. Հողօգտագործումը.....	39
4.8. Բուսական աշխարհը.....	40
4.9. Կենդանական աշխարհը.....	41
6. ՇՐՋԱԿԱՄԻՋԱԿԱԿԱՆ ՎՐԱԱՊՈՒՅՄՈՒԹՅԱՆ ԳԱՋԱՏԱՆ ԱՌՏԵՑՈՒՄ ԵՎ ՍԵՂՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	41

4.10.	Շինարարու թյ սն վու լ .....	43
4.10.1.	Օրպ ին ավսզանի վրասզդեցու թյ ու ն.....	43
4.10.2.	Աղմու կի և թղթու մների մակարդակների սճ.....	45
4.10.3.	Ջրօգտագործու մ և ջրպ ին համակարգերի վրասզդեցու թյ ու ն և մեղմսցու մ.....	46
4.10.4.	Շին թսվոնների առաջացու մ և կատակարու մ.....	48
4.10.5.	Հողպ ին համակարգերի վրասզդեցու թյ ու ն և մեղմսցնող միջոցառու մներ .....	50
4.10.6.	Աղեցու թյ ու ն բու սակն աշխարհի վրա և մեղմսցմն միջոցառու մներ.....	52
4.10.7.	Երթևեկու թյ սն վրասզդեցու թյ ու ն և մեղմսցմն միջոցառու մներ .....	52
4.10.8.	Մշխատնքի անվտանգու թյ ու ն և առողջու թյ ու ն.....	53
4.10.10.	Սեղիպ սնսեսակն սզդեցու թյ ու նը.....	55
5.	ԲԱՄԱԷՊԱԱԿԱՆ ՄԻՋՑՍՈՒՄԱԵՐԻ ՇՐԱԲԻ .....	57
6.	Բնապահպնական և սոցիպ սկն սզդեցու թյ ու նների մոնիտորինգպ ին պ սն .....	59
9.	ՀԱՐԱՅԻՆ ԲԱՐԿՈՒՄԱԵՐ, ՏԵՐԵԿԱՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԱՌՄ.....	61
10.	ՕՏՏԱՌՈՎԱԾ ԳՐԿԱՌՈՒԹՅԱՆ ՑԱԿ.....	62
11.	ՀԱԿԷՎԱԾԵՐ.....	64
11.1.	Հավելված 1. Բնապահպնական և սոցիպ սկն սզդեցու թյ ու նների կատակարմն պ սն (ԲՄՊ) 64	
11.2.	Հավելված 2. Բնապահպնական և սոցիպ սկն սզդեցու թյ ու նների մոնիտորինգի պ սն ....	72
11.3.	Հավելված 3. Նախզծմն թու յ լ տլու թյ ու ն/ ճարտարաբնապահպնզծպ ին առաջադրնք.....	75
11.4.	Հավելված 4. Բնահողի մատակարարմն և շինարքի հեռսցմն վպ ըերի վերաբերյ պ սեղեկնք 76	
11.5.	Հավելված 5. Շինարարական հրասարակի կսզմակերպմն պ սն.....	77
11.6.	Հավելված 6. Շինարարական աշխատնքների հրականսցմն հսջորդակնու թյ ու նը և ժաննակսցու յ ցը.....	78
11.7.	Հավելված 7. Անշարժ գու յ քի սեվակնու թյ սն վկպ սկն.....	79
11.8.	Հավելված 8. Հնրպ ին քննարկմն մանակիցների ցակը.....	80

## Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ԲՄԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոխտորինգի կենտրոն
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՏՎ	Տեխնիկական Վերահսկում

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

**ԳՅՈՒՄՐԻԻ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ԶՐՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ**

Ծրագրի անվանումը	Գյումրի «Բարեկամություն» զբոսայգու վերակառուցում
Ծրագրի նպատակը	Քաղաքային, զբոսաշրջային և սոցիալական զարգացում
Ծրագրի ֆինանսավորող	Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամ
Ծրագրի պատվիրատու	Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ
Փորձաքննության ձեռնարկող	Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ
Ձեռնարկողի հասցե	Մ. Բաղրամյան 6, Երևան 0019
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ	Էլ. Փոստ՝ Y.Muradyan@IDeA.am
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Շիրակի մարզ, Գյումրի համայնք, Գ. Նժդեհի փողոց 1/1 զբոսայգի
Զբոսայգու զբաղեցրած տարածքը	7.264217 հա

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

2. Գյումրիի «Բարեկամություն» զբոսայգու վերակառուցման ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվում է Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից: Ներկայացվող Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երկու փուլերով:

I. *Փուլ 1*, որի շրջանակում նախատեսվում է «Բարեկամություն» զբոսայգու տարածքի համահարթեցում, ինժեներական ցանցերի և ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքներ:

II. *Փուլ 2*, որի շրջանակում նախատեսվում է «Բարեկամություն» զբոսայգու տարածքի արդիականացում, հանգստի ու ժամանցային միջավայրի ձևավորում, հանրային և զբոսաշրջային ենթակառուցվածքների, կանաչապատ գոտիների ստեղծման աշխատանքներ:

3. Ծրագրում ներգրավված են՝

ա. «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամը՝ նախաձեռնել և իրականացնում է Գյումրիի «Բարեկամություն» զբոսայգու վերակառուցման և զարգացման նախագիծը:

բ. «ԳՈՂԹՆ» ՄՊԸ՝ իրականացրել է Ծրագրի փուլ 1-ով նախատեսվող նախագծային աշխատանքները:

գ. «Pomp and Circumstance Lab» ԱԶ՝ նախագծում է Ծրագրի փուլ 2-ով նախատեսվող աշխատանքները:

դ. «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակը»՝ համակարգելու է Ծրագրի շինարարական աշխատանքների իրականացումը Զբոսաշրջության և քաղաքաշինության բարեգործական հիմնադրամի հետ համատեղ:

4. Ծրագիրը, համաձայն ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի» Հոդված 14-ի կետ 8-ի, դասակարգվում է «Բ» կատեգորիա և պահանջում է բնապահպանական պետական փորձաքննության իրականացում:

5. Ծրագրի շրջանակում պատրաստվող բոլոր փաստթղթերը՝ ՇՄԱԳ հաշվետվությունը, բնապահպանական պետական փորձաքննության եզրակացությունը և Բնապահպանական և սոցիալական ազեցությունների կառավարման պլանը (ԲՍԿՊ) հանդիսանում են շինարար կապալառուի նախագծային փաթեթի անբաժանելի մաս:

6. Ծրագրի իրականացման ուղղակի ազդակակիր և շահառու է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքը, բնակչության թվաքանակը՝ 157, 332 բնակիչ:

## 1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 1.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

7. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:

**1.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հաշվետվության կազմը**

8. ՇՄԱԳ հաշվետվության մեջ գնահատման ենթակա օբյեկտները և բնութագրերը սահմանված են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13 կետերում:

**1.3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը**

9. Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումը իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ՀԲ և ԱԶԲ-ի բնապահպանական



ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող գործունեության աշխատանքային նախագիծը,
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների,
- ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- շահագրգիռ կողմերի հետ քննարկումներ

## **2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

10. Հայաստանի Հանրապետությունն ունի բավականին լավ մշակված և զարգացած բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակ, որն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Ստորև ներկայացվում են առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորումները.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

**i. ՀՀ սահմանադրություն ( 1995 թ., վերանայված 2015թ.)**

11. Հոդվածներ 10 և 12 երաշխավորում են ՀՀ-ում ամբողջ հասարակության և առանձին անհատների բնապահպանական անվտանգությունը, շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը:

**ii. ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (1992 թ., վերանայված 2014թ.)**

12. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին վերանայված օրենքն ընդունվել է 2014թ. հուլիսին: Օրենքն սահմանում է իրավական հենք պլանավորված գործողությունների և հայեցակարգերի պետական բնապահպանական փորձաքննության իրականացման համար և առաջարկում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացի ստանդարտ քայլերը: Օրենքը սահմանում է պարտադիր ՇՄԱԳ իրականացման ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպչական սկզբունքները ոլորտային զարգացման տարբեր տեսակի ծրագրերի և հայեցակարգերի: Համաձայն այս օրենքի գործունեություններն ըստ բնապահպանական ազդեցության դասակարգվում են 3 դասի՝ Ա, Բ և Գ: Դասերը սահմանվում է ըստ գործունեություն ծավալի, բնութագրի և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության աստիճանի հիման վրա: «Ա» դասի գործունեությունները խոշոր գործունեություններն են, որոնք նշանակալի ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա, ինչպիսիք են հանքարդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը, վտանգավոր թափոնների տեղափոխումը, աղբավայրերը, մետաղներ, շինանյութեր և այլ նյութեր արտադրող խոշոր ձեռնարկությունները, ջերմային էներգիայի խոշոր արտադրությունը և այլն: «Բ» դասը ներառում է գրեթե նույն տեսակի գործունեությունները, սակայն ավելի փոքր մասշտաբով ազդեցության: «Գ» դասը ներառում է գործունեությունների այն տեսակները, որոնք ունեն որոշակի աննշան ազդեցություն շրջակա միջավայրի վրա, սակայն այդ ազդեցությանների

փորձաքննությունն ավարտվում է նախատեսվող գործունեության ազդեցության նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) փորձաքննությամբ և չի պահանջում ՇՄԱԳ հաշվետվության ներկայացում և համապատասխան փորձաքննություն:

**iii. ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004 թ.)**

13. Օրենքը կարգավորում է աղբի հավաքման, տեղափոխման, ծավալների կրճատման և մարդու առողջության և շրջական միջավայրի վրա բացասական ազդեցության կանխման իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքը սահմանում է տվյալների բազաների ստանդարտացման, գույքագրման և պահպանման հետ կապված պետական քաղաքականության հիմնական սկզբունքները: Այն նաև կարգավորում է թափոնների վերամշակումը, պետական մշտադիտարկումն, ինչպես նաև դրամական փոխհատուցումն իրավաբանական անձանց կամ անհատների կողմից մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնասի համար:

14. Օրենսդրությունը պահանջում է թափոնների առաջացման հնարավորին կրճատում և դրանց կրկնակի օգտագործում/վերամշակում: Սա հատկապես կարևոր է վտանգավոր թափոնների դեպքում, քանի որ երկրում առկա է նման թափոնների վերջնական հեռացման և պահման հնարավորությունների պակաս: Եթե վտանգավոր թափոնները հնարավոր չէ վնասազերծել կամ վերամշակել երկրի ներսում, ապա դրանք տեղադրվում են ապահով պահեստում մինչև վտանգավոր թափոնների հեռացման համար ազգային ենթակառուցվածքների զարգացումը կամ վտանգավոր թափոնների արտահանման կազմակերպումը:

**iv. ՀՀ ջրային օրենսգիրք (2002 թ.)**

15. Ջրային օրենսգրքի հիմնական նպատակը երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության համար իրավական հիմքի ստեղծումն է, քաղաքացիների և

տնտեսության ոլորտների ջրի կարիքների բավարարումը ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով, և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պաշտպանության երաշխավորումը: Ջրային օրենսգիրքն անդրադառնում է հետևյալ հիմնական խնդիրներին. պետական/տեղական իշխանությունների և հասարակության պարտականություններին, ջրի ազգային քաղաքականությանը (2005թ.) և ջրի ազգային ծրագրի (2006թ.) մշակմանը, ջրային կադաստրի և մշտադիտարկման համակարգին, համապատասխան տեղեկությունների հասանելիությանը, ջրօգտագործման և ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների համակարգերին, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործմանը, ջրի որակի չափանիշներին, հիդրավիլ կառույցների շահագործման անվտանգության խնդիրներին, ջրային ռեսուրսների պաշտպանությանը և պետական վերահսկողությանը:

**v. ՀՀ օրենքը Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998թ., վերանայված 2016թ.)**

16. Օրենքը սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և օգտագործման միջև: Այն նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը, սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը, և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը: Օրենքը պահանջում է իրավասու մարմնի (Պատմության և մշակութային հուշարձանների պահպանության վարչություն) հաստատումը շինարարության, գյուղատնտեսության և այլ տեսակի գործունեության նպատակով հուշարձաններ ունեցող վայրերում հողերի հատկացման համար:

**vi. ՀՀ օրենքը Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006թ.)**

17. Օրենքը սահմանում է Հանրապետության համալիր կամ առանձին բնական օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության հարաբերությունները:

18. Համաձայն օրենքի բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ նշանակության դասակարգվում են միջազգային, հանրապետական և տեղական կարևորության տարածքների: Ըստ կատեգորիայի հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են պետական *արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:*

**vii. ՀՀ օրենքը Բուսական աշխարհի մասին (1999թ.)**

19. Օրենքը սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:

**viii. ՀՀ օրենքը Կենդանական աշխարհի մասին (2000թ.)**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

20. Օրենքը սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները, և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները:

**ix. ՀՀ օրենսգիրքը Ընդերքի մասին (2011թ.)**

21. Օրենսգիրքը սահմանում է ՀՀ-ում ընդերքի օգտագործման սկզբունքները և կանոնները, հանքավայրերի պահպանման և օգտագործման հետ կապված հարաբերությունները, արդյունավետ օգտագործման պայմանները և կանոնները, հանքավայրերի համալիր օգտագործումը և պահպանումը, հանքարդյունաբերության անվտանգությունը և շրջակա միջավայրի պաշտպանությունը դրա բացասական ազդեցություններից, ինչպես նաև պետության, քաղաքացիների և հանքավայրերի շահագործողների իրավունքների պաշտպանությունը: Համաձայն օրենսգրքի, բնական հանքավայրերի տարածքները պետության բացառիկ սեփականությունն են: Դրանք կարող են որոշակի ժամկետով հանձնվել շահագործման, սակայն չեն կարող սեփականաշնորհվել: Օրենքը նաև սահմանում է բնական ռեսուրսների և հանքավայրերի պայմանները, պահանջները և առանձնահատկությունները: Այն նաև սահմանում է վճարումների սկզբունքները, փոխհատուցումը, մշտադիտարկումը և սահմանափակումները հանքարդյունաբերության համար: Հանքային օրենսգիրքը պարտավորեցնում է շահագործողին մշակել բնապահպանական կառավարման պլան, համաձայնեցնել այն կառավարության լիազոր մարմնի հետ և հետևել դրան

գործունեության ընթացքում: Շահագործողի բնապահպանական պարտավորությունները ներառում են աղտոտման կառավարումը, տեղանքի վերականգնումը, և մեղմացնող միջոցառումների իրականացումը/ֆինանսավորումը վթարի դեպքում: Բնապահպանական կառավարման և տեղանքի վերականգնման միջոցառումների կիրառման ծավալը և ժամանակը սահմանվում են յուրաքանչյուր հանքի շահագործման համաձայնագրի համար առանձին և նշվում են նման համաձայնագրում:

**x. ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005 թ.)**

22. Օրենքը կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

**xi. ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998թ.)**

23. Օրենքը (Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

**xii. ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն (2003 թ.)**

24. Որոշումը հաստատում է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը, պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման պայմանների վերաբերյալ և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:

**xiii. ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30 (2009 թ.)**

25. «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» որոշումը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

**xiv. ՀՀ Կառավարության որոշում N 75-Ն (2011 թ.)**

26. «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշումը սահմանում է մակերևութային ջրերի՝ ջրօգտագործման նպատակային նշանակության կամ որակի կարգերը:

**xv. Ուղեցույցներ և ստանդարտներ**



27. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

**xvi. Բնապահպանական որակի ստանդարտներ**

28. Կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

### **3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

#### **3.1. Ծրագրի իրականացման վայրը**

29. Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Գարեգին Նժդեհի փողոց 1/1 զբոսայգու՝ «Բարեկամություն»

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

զբոսայգու, տարածքում: Զբոսայգու տեղադիրքը Գյումրի համայնքում և տեղանքի իրավիճակային հատակագիծ-քարտեզը ներկայացված է Նկ. 2-ում: Զբոսայգին գտնվում է Խանջյան և Չայկովսկի զուգահեռ փողոցների միջև, Ազնավուրի անվան հրապարակի հարևանությամբ և զբաղեցնում է մոտ 7.2 հա տարածք: Այգու մերձակայքում առկա են բնակելի և խառը օգտագործման շինություններ, հասարակական նշանակության կենտրոններ: Զբոսայգու ձևավորումը Գյումրիում տեղի է ունեցել 1940-1980 ական թվականներին և այգու որոշ լուսանկարներ բերվում են Նկ. 1-ում ստորև:

*Նկ. 1. Զբոսայգու լուսանկարներ. ա) ընդհանուր տեսքը, բ) գլխավոր մուտքը*

ա)



բ)



Նկ. 2 «Բարեկամություն» զբոսայգու տեղադիրքը և իրավիճակային քարտեզ-հատակագիծը Գյումրիի համայնքում:  
Աղբյուրը: google earth data 2020թ.



### **3.2. Զբոսայգու գոյություն ունեցող վիճակի նկարագրությունը**

30. Զբոսայգու տեղամասում կատարված ակնադիտական ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ զբոսայգու տարածքը՝ 7.2 հա մակերես, գտնվում է անմխիթար վիճակում, տարածքում առկա են կենցաղային և շինարարական աղբի մնացորդներ, բազմակի հատված կոճղաշիվային և մացառուտային անկանոն աճած բուսականություն և ընդհանուր անբարեկարգ վիճակ, ինչը՝ հետևանք է հետերկրաշարժյան տարիների, երբ այգու տարածքում տեղադրվել են տնակներ և օգտագործվել է բնակչության կողմից կենցաղը և առօրյա կյանքը կազմակերպելու նպատակով:

31. Հետերկրաշարժյան և 90-ական թվականներին տիրող ծանր սոցիալ-տնտեսական պայմաններն իրենց ազդեցությունն են ունեցող այգու բուսական աշխարհի վրա, արդյունքում զբոսայգու հարյուրավոր ծառեր և թփեր բազմակի հատվել են և օգտագործվել որպես վառելանյութ:

32. Ներկայումս տարածքում առկա է թվով 10 ծառ, որոցից միայն 5-ն է ենթակա հետագա պահպանման՝ համաձայն ծառագետի կողմից տեղանքում իրականացված ուսումնասիրության և տրամադրած եզրակացության:

33. Տեղագնման արդյունքում այգում արձանագրվել է բավականին մոծ փոս՝ մոտ 2000 ք. մ մակերեսով, որը գոյացել է այգու տարածքից հողային զանգվածի հեռացման արդյունքում՝ ըստ գնահատականների շուրջ 6000 խ. մ հողային հանույթ:

34. Զբոսայգում բացակայում են ինժեներական հաղորդակցման կոմունիկացիաները և ենթակառուցվածքները:

35. Ներկայումս այգում առկա են կիսաքանդ շինություններ՝ բեմական կառույց, երկու կիսաքանդ ջրավազաններ, կիսաքանդ ճանապարհային սալիկներ, որոնք բոլոր ենթակա են քանդման:

### 3.3. Բարեկամություն» զբոսայգու վերակառուցման և զարգացման նախագիծը

36. Զբոսայգու տարածքի կազմակերպման և հատակագծային լուծումներում հաշվի են առնված հինգ հիմնական գոտիներ.(I) հանգստի, (II) սպորտային, (III) խաղային, (IV) ժամանցային և (V) հատուկ նպատակային գործունեության: Զբոսայգում նախատեսվում են նաև ծառայությունների տաղավարներ և գործառնական նշանակության տարածքներ, որոնց բաշխվածությունը կատարված է տարածքում հավասարաչափ և կապահովի այգում նշված տարածքների արագ հասանելիությունը: Զբոսայգու հատակագծային կազմակերպման մոդելը ներկայացված է Նկ. 3-ում, իսկ նախատեսվող կառույցների մակերեսները բերված են Աղ. 1-ում:

37. Զբոսայգու վերակառուցման և զարգացման աշխատանքները նախատեսվում են իրականացնել երկու փուլերով.

#### *Փուլ 1՝*

- զբոսայգու տարածքի (7.2 հա) հողային համահարթեցման աշխատանքներ,
- զբոսայգու ներքին ինժեներական կոմունիկացիաների (էլեկտրասնուցում, ջրամատակարարում և ջրահեռացում, ոռոգում) իրականացման աշխատանքներ,
- հասարակական զուգարանի և էլեկտրական ենթակայանի կառուցման աշխատանքներ
- սիզամարգերով հագեցած կանաչ գոտիների ստեղծում:

#### *Փուլ 2՝*

- զբոսայգու տարածքի արդիականացում, հանգստի, ժամանցային, սպորտային և խաղային գոտիների ձևավորում,
- հանրային և զբոսաշրջային գոտիների ստեղծում,
- զբոսայգու կանաչապատ գոտիներում ծառափուտային բուսականության ստեղծում:

38. Սույն հաշվետվությունում դիտարկվում են Ծրագրի իրականացման փուլ 1-ով նախատեսվող վերակառուցման աշխատանքների շրջանակը և դրանցից ակնակալվող ազդեցությունները, քանի որ Ծրագրի հնարավոր բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա գահատվում են փուլ 1-ով նախատեսվող գործողությունների ընթացքում:

Նկ. 3 «Բարեկամություն» զբոսայգու հատակագծային մոդելը:



*Աղ.1 Հատակ ազ ծ այ ի ն լ ու ծ ու մ ն եր ը և տե խ ն ի կ աս ն տե ս ակ ան ց ու ց ան ի շ ն եր ը :*

<b>№</b>	<b>Կառույցի անվանումը</b>	<b>Մակերես, ք. մ</b>	<b>Ծրագրի փուլը</b>
1.	<i>տեղեկատվական կենտրոն</i>	20	փուլ 2
2.	<i>«քովորկինգի» տարածք</i>	120	փուլ 2
3.	<i>այգեգործության դպրոց</i>	30	փուլ 2
4.	<i>կենտրոնական պավիլիոն</i>	250	փուլ 2
5.	<i>բեմ</i>	50	փուլ 2
6.	<i>սրճարան (փոքր)</i>	50	փուլ 2
6 ա.	<i>սրճարան (կենտրոնական)</i>	120	փուլ 2
7.	<i>տոնավաճառ (40 և ավելի տաղավար)</i>	240	փուլ 2
7ա.	<i>կրպակ*</i>	6	փուլ 2
8.	<i>երաժշտական պավիլիոն</i>	30	փուլ 2
9.	<i>սանիտարական բլոկ</i>	40	փուլ 1
9. ա	<i>էլեկտրական ենթակայան</i>		փուլ 1
10.	<i>սպասարկման գոտի</i>	200	փուլ 2
11.	<i>կոմունիկացիաների սպասարկման կետ (տոնավաճառ, 30 և ավելի տաղավար )*</i>	>1	փուլ 2
12.	<i>կոմունիկացիաների (լրացուցիչ բեմ) սպասարկման կետ*</i>	>1	փուլ 2

\* բերված չեն մոդելում (Նկ .3) մակերեսների փոքր լինելու պատճառով



### 3.4. Նախատեսվող գործունեության այլընտրանքային տարբերակը

39. Ներկայացվող գործունեության այլընտրանքային տարբերակ դիտարկվել է Ծրագրի «գրոյական տարբերակը», այսինքն՝ Գյումրիի «Բարեկամություն» զբոսայգու ներկա անբարեկարգ վիճակի պահպանումը, ինչը չի ենթադրում զբոսայգիներին բնորոշ.

- քաղաքային զբոսաշրջության հեռանկարային զարգացում և զբոսաշրջիկությունից ակնկալվող եկամուտների ավելացում,
- համայնքային կյանքի, հանգստի և ժամանցի համար էստետիկ և անվտանգ միջավայրի ստեղծում,
- քաղաքային զբոսայգուն բնորոշ լանդշաֆտի գեղեցիկ տեսքի, էկոլոգիական միջավայրի և նշանակության, ինչպես նաև հանգստի և ժամանցի համար անրաժեշտ ենթակառուցվածքների ապահովում:

40. Այսպիսով, վերը թվարկածից բխում է, որ «Բարեկամություն» զբոսայգու ներկա իրավիճակի պահպանումը կամ Ծրագրի «գրոյական տարբերակը» չեն նպաստում Գյումրու համայնքային զարգացմանը, մինչդեռ Ծրագրի իրականացումից գնահատվում են երկարաժամկետ դրական արդյունքներ, իսկ զբոսայգու վերակառուցման աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ բացասական ազդեցությունները գնահատվում են Ծրագրի իրականացման փուլ 1-ի շրջանակում, շրջակա միջավայր վրա կանխատեսվող ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ, կլինեն տեղայնացված և նվազ ազդեցության հաշվի առնելով նախատեսվող աշխատանքների բնույթը և ծավալը, ինչպես նաև զբոսայգու գոյություն ունեցող իրավիճակը:

### 3.5. Վերակառուցման աշխատանքների շրջանակը՝ Փուլ 1

41. Փուլ 1-ով նախատեսվող աշխատանքների համար հիմք են հանդիսացել (I) Գյումրի համայնքապետարանի կողմից ներկայացված/մշակված ճարտարապետահատակագծային առաջադրանքը (*Հավելված 3.*), (II) Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի փաստաթուղթը և (III) ՀՀ քաղաքաշինության ոլորտում գործող իրավական նորմերի շրջանակը:

42. Փուլ 1-ով նախատեսվող վերակառուցման աշխատանքների շրջանակը ներկայացվում է հաջորդող բաժիններում:

#### 3.5.1. Ինժեներական հաղորդակցուղիների իրականացում

##### *ա) Զրամատակարարում*

- ջրամատակարարման ներտարածքային ցանցի իրականացում
- ջրամատակարարման ջրավազանների կառուցում

##### *բ) Կոյուղի*

- կոյուղու ներտարածքային ցանցի իրականացում

##### *գ) Ոռոգում*

- զբոսայգում հետագայում ստեղծվող կանաչ գոտիների համար նախատեսվող ոռոգման համակարգի իրականացում

##### *դ) Էլեկտրամատակարարում*

- նոր տրանսֆորմատային ենթակայանի կառուցում

##### **ե) կանաչապատ գոտիների ստեղծում**

-

- բազմամյա խոտաբույսերի տնկում՝ շուրջ 58 000 ք. մ տարածքում:

43. Ներկայումս իրականացվում է *ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրասնուցման տեխնիկական պայմանների* ձեռք բերման գործընթացը, իսկ ինժեներական հաղորդակցուղիների հաշվարկային նախագծային հզորությունները բերված են Աղ.2-ում ստորև.

**Աղ.2 Ինժեներական հաղորդակցուղիների ցուցանիշները:**


<i>Անվանումը</i>	<i>Միավորը</i>	<i>Ցուցանիշը</i>
<i>Խմելու-տնտեսական ջուր</i>	լ/վ	5
<i>Կենցաղային կոյուղի</i>	լ/վ	6
<i>Ոռոգման ցանց</i>	խ.մ /օ ր	160
<i>Էլեկտրասնուցում</i>	կՎտ	200

### 3.5.2. Հասարակական զուգարանի կառուցում

44. Հասարակական զուգարանը զբոսայգու հատակագծում ներկայացված է տրանսֆորմատային ենթակայանին կից, որը նախագծվում է երեք զուգարանագոքով՝ յուրաքանչյուր հատվածում, որոնցից մեկը հարամարեցված է սակավաշարժ խմբերի համար: Կառույցի արտաքին հարդարման լուծումներում նախատեսվում է «Արթիկի» սրբատաշ տուֆով երեսպատման աշխատանքներ և սրբատաշ բազալտե շարվածքի իրականացում: Հասարակական զուգարանի հատակների ներքին լուծումներում կօգտագործվեն կերամիկական սալիկներ:

45. Տրանսֆորմատային ենթակայանի և հասարակական զուգարանի գլխավոր հատակագիծը ներկայացված է նկ.4-ում:

Նկ. 3 Էլեկտրական ենթակայանի և հասարակական զուգարանի գլխավոր հատակագիծ՝ փուլ 1-ով նախատեսվող աշխատանքներ:



**3.5.3. Շինարարական աշխատանքների կազմակերպում**

46. Փուլ 1-ով նախատեսվող վերակառուցման աշխատանքների *նախաշինարարական* փուլում կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքները: Շինհրապարակի կազմակերպման աշխատանքները կիրականացվեն բացառապես զբոսայգու տարածքի վարչական սահմանների ներսում:

47. Շինարարական հրապարակի կազմակերպման պլանը բերվում է *Հավելված 5. -ում*, որտեղ հաշվի են առնված ըստ գործող նորմերի պահանջվող միջոցառումները, մասնավորապես՝

- զբոսայգու տարածքի ողջ պարագծով ժամանակավոր մետաղական ցանկապատի իրականացում
- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքները՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, բիոզուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները

48. Ցանկապատից դուրս կապահովվեն հետիոտային անցուղիները և շինարարական մեքենասարքավորումների հրապարակին մոտեցման և տեղաշարժի ուղղությունները, իսկ հրապարակ մուտքը նախատեսվում է Խանջյան փողոցի կողմից:

49. Շինարարական հրապարակում *աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման* ուղղված միջոցառումների համալիրը ներկայացված է ԲՄԿՊ (Հավելված 1.):

50. Զբոսայգու վերակառուցման աշխատանքների շրջանակում (փուլ 1), համաձայն շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծի, նախատեսվում է.

- զբոսայգու տարածքի մաքրում շինարարական աղբից
- տարածքի մաքրում թփերից, մացառուտներից, ծառերից և կոճղերից
- տարածքի համահարթեցման աշխատանքներ՝ բերելով այն նախագծային նիշի
- ջրամատակարարման և կոյուղագծերի մոնտաժային աշխատանքներ
- ստորգետնյա երկու ջրամբարների, պոմպակայանների և խորքային հորերի կառուցում
- տրանսֆորմատորի ենթակայանի և հասարակական գուգարանի կառուցման աշխատանքներ
- բազմամյա խոտաբույսերի տնկում՝ շուրջ 58 000 ք. մ տարածքում:

51. Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել ստորև բերվող ծավալի հողային աշխատանքները.

- հողային հանույթ՝ 33 146.2 խ. մ
- հետ լիցք՝ 1 252.49 խ. մ
- հեռացվող/տեղափոխվող գրունտ՝ 31 893. 71 խ. մ
- մատակարարվող բնահող/գրունտ՝ 30 000 խ. մ

52. Շինարարական աշխատանքների ընթացքում տարածքի մաքրումն առկա ծառերի կոճղերից նախատեսվում է իրականացնել տրակտորի կամ բուլդոզրի միջոցով՝ քաշման անմիջական ճիգի եղանակով, որի ընթացքում նախապես կկտրվեն կոճղերի արմատները, որից հետո կոճղի վրա կամրացվի մեքենային կապած ճոպանի օղակը: Արմատահանումը կարելի է իրականացնել նաև հատուկ սարքավորումներով հազեցված էքսկավատորներով: Տարածքի մաքրումից առաջացած փայտանյութը (ծավալները բերված են աղ. 3-ում) կդարսվի և կտեսակավորվի տարածքում, հետագա

օգտագործման համար պիտանի փայտանյութը տեղում կկտրտվի և բարձելով ինքնաթափերը կհեռացվի տարածքից հետագա օգտագործման նպատակով: Մնացած թուփ և մացառուտը, որը գնահատվում է երկրորդային օգտագործման համար ոչ պիտանի կհեռացվի տարածքից, կտեղափոխվի բնակավայրից դուրս աղբահանության վայր և կայրվի:

**Աղ. 3 Տարածքում առկա ծառերի կոճղերից մաքրման ծավալները:**

Ծառածածկի Խտությունը	Ծառերի միջին քանակը, հատ/հա	Փայտանյութի ծավալը, խ. մ, ծառ/հա	Կոճղերի ծավալը, խ. մ, ծառ/հա
նոսր	150	0.55/85	0.3/45
միջին	340	0.55/190	0.3/105
խիտ	500	0.55/275	0.3/150

53. Շինաշխատանքերի իրականացումը կիրականացվի մրցութային կարգով ընտրված շինարար կապալառուի կողմից: Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն:

54. Շինարարության ընթացքում անհրաժեշտ մնացած նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող մոտակա ջրագծից (տեխ. պայմանը ձեռք բերման գործընթացում է): Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի նախատեսվող էլ. ենթակայանից ((տեխ. պայմանը ձեռք բերման

գործընթացում է): Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստերից:

55. Շուրջ 30 000 խ.մ ծավալով բնահողի մատակարարումը նախատեսվում է իրականացնել «Կառնիտի բազալտի հանքավայրից»՝ ըստ Գյումրիի համայնքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքի (*Հավելված 4.*), իսկ հեռացվող գրունտը նախատեսվում է տեղափոխել և թափոնակույտել «Մուշ2» թաղամասի հարևանությամբ գտնվող խորխորատում:

56. Կբացառվի շինարարական տեղամասում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչիներով Գյումրի համայնքին մոտ բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովվելով աշխատանքների կատարման անընդհատությունը:

57. Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն)՝ հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահպանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

58. Շինարարական աշխատուժի առավելագույն թիվը գնահատվում է 15 մարդ, որից ինժեներական կազմը՝ 2 մարդ և ծառայողական աշխատողներ՝ 1 մարդ, մնացածը՝ բանվորներ:

59. Զբոսայգու փուլ 1 –ով նախատեսվող աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 6 ամիս, իսկ շինարարական աշխատանքների իրականացման հաջորդականությունը և ժամանկացույցը բերվում է *Հավելված 6-ում*, ներառյալ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ



հրապարակի նախապատրաստման գործողությունները (կցվում են նաև հաշվետվությանը):

## 4. ԵԼՔԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### 4.1. Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

60. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Շիրակի մարզի Գյումրի համայնքում գտնվող «Բարեկամություն» զբոսայգու տարածքում: Տարածաշրջանի ռելիեֆը հարթավայրային և նախալեռնային է:

61. Տեղանքի *երկրաբանա-լիթոլոգիական* կառուցվածքը, համաձայն իրականացված ուսումնասիրությունների և գոյություն ունեցող զրական տվյալների, վերնից-ներքև ներկայացված է գրունտների հետևյալ տարատեսակներով.

Շերտ – 1 Բուսահողի լիցք՝ շինարարական և կենցաղային աղբի մնացորդներով, կավավազային կազմի, խճավազի և մանրախճի պարունակությամբ: Հզորությունը տատանվում է 1. 0-1.6 մ սահմաններում:

Շերտ – 2 Պինդ պլաստիկ ավազակավեր՝ խճավազը 10-30 % պարունակությամբ, ավազի միջնաշերտով: Տարածումն ամենուր է, հզորությունը՝ մինչև 8.2 մ:

Շերտ – 3 Ավազ խոշորահատիկ՝ միջին խտության և խճավազի պարունակությամբ մինչև 20 %: Տարածված է ամենուր, հզորությունը՝ 1.2 մ:

Շերտ – 4 Հրաբխային տուֆեր՝ կարմրանարնջագույն: Ունի միջին կարծրություն: Բացված հզորությունը՝ 1.5 մ, տարածումն ամենուր:

Շերտ – 5 Պինդ պլաստիկ կավեր, հզորությունը՝ 1.2 մ

62. *Տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները* գնահատվում են բարենպաստ շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):

#### 4.2. Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

63. Բնութագրվող տարածքը գտնվում է «Ցուրտ» կլիմայական շրջանում: Բնորոշ է ցամաքային կլիման: Բացարձակ նվազագույն ջերմասիճանը կազմում է  $-36^{\circ}\text{C}$ , բացարձակ առավելագույն ջերմասիճանը՝  $38^{\circ}\text{C}$ : Քամու միջին տարեկան արագությունը կազմում է 1.3 մ/վրկ: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 498 մմ: Ձյան ծածկույթը ձևավորվում է նոյեմբեր ամսին, ձյան ծածկույթով օրերի թիվը կազմում է մոտ 94 օր, իսկ ծածկույթի առավելագույն բարձրությունը՝ 61 սմ: Գրունտի սառչման առավելագույն խորությունը 142 սմ է, ցուրտ սեզոնին գերակշռող են համարվում հյուսիսայան քամիները (ՀՀՇՆ II-7.01-2011):

#### 4.3. Սեյսմիկ բնութագրերը

64. Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, Գյումրին գտնվում է սեյսմիկ *երրորդ գոտում*, գրունտների հնարավոր արագացման առավելագույն մեծությունը կազմում է  $A_{\max}=0.4g$  և ունի *8-9 և ավելի* բալ սեյսմիկ ռիսկայնության

աստիճան, իսկ գրունտները համապատասխանում են սեյսմիկ երրորդ կարգի գրունտների:

#### **4.4. Պատմամշակութային հուշարձաններ և բնության հատուկ պահպանվող տարածքներ**


65. Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ: Բնութագրվող տարածքի տեղագնության արդյունքում արձանագրվել է Հրանտ Դինքի հուշարձան/քարը և այլ փոքր հուշարձաններ զբոսայգու մուտքային հատվածում, որոնք նախատեվում են պահպանել:

#### **4.5. Օդային ավազան**

66. ՀՀ-ի տարածքում օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Գյումրի համայնքի մթնոլորտային օդում իրականացվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մշտադիտարկումներ քաղաքում գործող 24 դիտակետերում և 1 ստացիոնար դիտակայանում: Համաձայն ՀՄԿ-ի 2019 թվականի տեղեկագրի՝ Գյումրի քաղաքում քաղաքում ազոտի և ծծմբի երկօքսիդների որոշված ցուցանիշների 17%-ում դիտվել են փոշու, 15%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 0.1%-ում՝ ազոտի երկօքսիդի գերազանցումներ գործող ՍԹԿ-ներից: Նկ.4-ում ներկայացված են 2018 և


2019 թվականներին համայնքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

**Նկ. 4** *Գյումրի համայնքում մթնոլորտային օդում որոշված առաջնային աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաների համեմատությունը 2018 և 2019 թվականներին:*



67. 2020թ-ին 2019թ-ի հետ համեմատած դիտվել է ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիայի աճ 1.1 անգամ, ընդհանուր փոշու կոնցենտրացիան՝ նվազել է 1.1 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի դիտարկված կոնցենտրացիաներում էական փոփոխություններ չեն արձանագրվել: Նկ. 5-ում ներկայացված են մթնոլորտային օդում 2020 թվականի հունվարի-փետրվար ամիսներին առաջնային աղտոտիչների չափված կոնցենտրացիաները, որոնք դիտվել են ՍԹԿ-ների տիրույթում:

**Նկ. 5 Գյումրի քաղաքում մթնոլորտային օդում որոշված առաջնային աղտոտիչների կոնցենտրացիաները 2020 թվականի հունվար- փետրվար ամիսներին:**



68. Համայնքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում քաղաքաշինության և արդյունաբերության ոլորտները:

#### 4.6. Ջրային համակարգեր

69. Շիրակի մարզի հիմնական մակերևութային ջրային մարմինն Ախուրյան գետն է, որը սկիզբ է առնում Արփի լճից և հանդիսանում է Արաքս գետի առաջին վտակը: Գետի ջրահավաք ավազանի մակերեսը կազմում է 9 670 ք.կմ, որից 2 784 ք. կմ-ը գտնվում է ՀՀ տարածքում, գետի երկարությունը կազմում է 186 կմ, ունի գետային ցանցի թույլ խտություն՝ 053 կմ/ք.կմ, հոսքի միջին արագությունը ք.կմ-ի վրա կազմում է 2.5 լ/վրկ (ԵՄ 2015):

70. Գետը հանդիսանում է ՀՀ արևմտյան տարածաշրջանում հիմնական ջրային մարմինը և գետի ջուրը հիմնականում օգտագործվում է ոռոգման և արդյունաբերական նպատակով:

71. ՀՀ տարածքում մակերևութային ջրերի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայր ինստիտուտի «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Ախուրյան գետի ջրի որակի մոնիտորինգային դիտարկումները Գյումրի քաղաքին ամենամոտ իրականացվում են 0.8 կմ ք. Գյումրիից վերև (33 դիտ.) և 5 կմ ք. Գյումրիից ներքև (34 դիտ. ), դիտակետերի տեղադիրքը ներկայացված է Նկ.6-ում ստորև:

**Նկ.6 Ախուրյան գետի ավազանի մակերևութային ջրերի մոնիտորինգի 33 և 34 դիտակետերի տեղադիրքը:**



72. Դիտակետերում ջրերի որակը գնահատվել է 3-րդ դասի՝ համաձայն 2018 թ.-ի տարեկան ամփոփագրի, Աղ.4-ում ամփոփվում են ջրի որակի ցուցանիշները դիտարվող դիտակետերում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Աղ. 4. Ախուրյան գետի ջրի որակի ցուցանիշները 2019 թ.-ին:**

Գետավազան	Դիտակետի տեղադրությունը (դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ախուրյան	0.8 կմ ք. Գյումրիից վերև (33 դիտ.)	Ֆոսֆատ իոն, մոլիբդեն, Երկաթ, ԿՆ*	3-րդ	3-րդ
	5 կմ ք. Գյումրիից ներքև (34 դիտ)	Ամոնիում ի- ոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, երկաթ, ԸԱԱ, ընդհա նուր ֆոսֆոր, ԿՆ	3-րդ	3-րդ

\* Կախված նյութեր

73. Հիդրոտերկրաբանական տեսակետից, ըստ կատարված ուսումնասիրությունների և գրականական տվյալների տեղանքում գրունտային ջրերը գտնվում են 9.0-9.6 մ հորիզոններում:

**4.7. Հողօգտագործումը**

74. Կառուցապատվող տարածքը հանդիսանում է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող գույք՝ կառուցապատման իրավունքով: Անշարժ գույքի նկատմամբ իավունքների պետական գրանացման վկայականը ներկայացված է Հավելված 7.-ում: Հողամասը՝ ըստ նպատակային նշանակության, հանդիսանում է բնակավայրային և ունի ընդհանուր օգտագործման նշանակություն: Համաձայն սեփականաշնորհման վկայականի՝ հողամասի մակերեսը կազմում է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

7.264217 հա, որտեղ առկա է համայնքային սեփականություն հանդիսացող 124.29 ք.մ մակերեսով շինություն, որոնք նախատեսվում են ապամոնտաժել:

#### 4.8. Բուսական աշխարհը

75. Գյումրու տարածաշրջանը Շիրակի մարզին բնորոշ հանդես է գալիս բուսական աշխարհի խիստ բազմազանությամբ, ինչին նպաստել է տարածաշրջանում բարձրությունների մեծ տարբերությունները: Բնորոշ է լեռնատափաստանային և լեռնաչորային բուսականությունը: Շիրակի մարզում հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված շուրջ 40 հազվագյուտ և անհետացող բուսատեսակներ: Բնութագրվող տարածաշրջանում առավել հանդիպող բուսատեսակներից են. բարդին (*Populus*), սկացիան (*Robinia*), թղկի (*Acer*), թթենի (*Morus*), սզնի (*Crataegus*), ուռատերև տանձենի (*Pyrus salicifolia*), սովորական հացենի (*Fraxinus excelsior*), աղեղնաեզր ասպիրակ (*Spiraea crenata*), արևելյան ծորենի (*Berberis orientalis*), չմենի (*Cotoneaster integerrima*), վրացական ցախակեռաս (*Lonicera iberica*), սովորական լեռնաչամիչ (*Ephedra procera*), թփային հասմիկ (*Jasminum fruticans*), թեղի (*Ulmus*), ալուչա (*Prunus*), փշատենի (*Elaeagnus*), ուռենի (*Salix*), մասրենի (*Rosa canina*) այլն բուսատեսակներ:

76. Գյումրու «Բարեկամություն» զբոսայգին գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով:

77. Զբոսայգում հետերկրաշարժային տարիներին ծանր սոցիալ-տնտեսական պայմաններով պայմանավորված վերացվել է այգու ծառաթփուտային բուսականությունը: Ներկայումս զբոսայգու տարածքը վերածված է բազմակի հատված ծառաթփային բուսականության կոճղաշիվային մացառուտի: Ներկայումս



տարածքում առկա են տաս ծառեր, որնոցից միայն վեց ծառեր՝ հացի սովարական (3 հատ), թեղի փետրաճյուղավոր (2 հատ), խնձորենի ( 1 հատ), են ենթակա պահպանման՝ համաձայն ծառագետի տրված եզրակացության:

#### 4.9. Կենդանական աշխարհը

78. Գյումրու տարածաշրջանի կենդանական աշխարհը ևս հանդես է գալիս Շիրակի մարզին բնորոշ կենդանական ձևերով, որոնք ևս ներկայացված են տափաստանային և բարձր լեռնային կենդանական ձևերով և քիչ արտահայտաված են տեղական էնդեմիկ ձևերը: Տարածաշրջանում լայնորեն տարածված են, երկկենցաղներից և սողուններից՝ դողոշներ, գորտեր, մողեսներ և օձեր, կաթնասուններից՝ նապաստակ, աղվես և գայլ, ինչպես նաև կրծողների տեսակները:

79. Ինչպես փաստվեց բուսական աշխարհի դեպքում, այնպես էլ բնութագրվող զբոսայգին գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղամասում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված կենդանական տեսակներ՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով:

## 6. ՇՐՋԱԿԱ ՍԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

80. Գյումրու «Բարեկամություն» զբոսայգու վերակառուցման (*փուլ 1*) աշխատանքների ընթացքում որպես *փոքր և միջին մեծության վերակառուցմանը* հատուկ գործունեություն, ակնկալվում են *միջին աստիճանի բացասական ազդեցություններ* շրջակա միջավայրի վրա, որոնք կլինեն *ժամանակավոր՝* պայմանավորված շինարարության տևողությամբ և *տեղայնացված՝* ընդգրկելով շինարարական տեղամասի սահմանները:

81. Նախատեսվող գործունեության ընթացքում հիմնականում գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, ինչպես նաև աղմուկի մակարդակների աճ՝ շինարարական գործողություններով պայամանավորված: Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա նշված ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի զբոսայգու վերակառուցման աշխատանքների ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող աշխատանքների ծավալը և բնույթը:

82. Ընդհանուր առամամբ Ծրագրից ակնկալվող դրական արդյունքները կլինեն երկարատև և կգերակշռեն շինգործողությունների ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող բացասական ազդեցությունները, մասնավորապես կվերականգնվի քաղաքային միջավայր, վերակառուցված, իսկ հետագայում նաև կանաչապատված զբոսայգին կնպաստի մթնոլորտային օդի գետնամերձ շերտում փոշու մասնիկների մակարդակների նվազեցմանը, ինչպես նաև Ծրագիրը կնպաստի զբոսայգու էկոլոգիական, գեղագիտական և ֆունկցիոնալ նշանակության վերականգնմանը:

83. Շրջակա միջավայրի վրա կոմուլյատիվ ազդեցություններ զբոսայգու մերձակայքում իրականացվող գործունեություններից չեն կանխատեսվում, քանի որ սույն հաշվետվության պատրաստման պահին նմանատիպ աշխատանքներ պլանավորված չեն:

**4.10. Շինարարության փուլ**

84. Սույն բաժնում դիտարկվում են շրջակա միջավայրի վրա ազդեցությունները Ծրագրի իրականացման փուլ 1-ով նախատեսվող վերակառուցման աշխատանքների ընթացքում:

**4.10.1. Օդային ավազանի վրա ազդեցություն**

85. Զբոսայգու տարածքի հողային համահարթեցման աշխատանքների ընթացքում գնահատվում են անօրգանական փոշու ժամանակավոր, չկազմակերպված արտանետումներ: Հողային շերտի հորատման, բեռնման և թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

$K_1$  –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

$K_2$  –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

$K_3$  –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1,8

$K_4$  –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

$K_5$  –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.6

$K_6$  –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային համահարթեցման աշխատանքների տևողությունը հաշվարկվում է 30 օր

30 օր x 8 ժամ = 240 ժամ/շինարարություն :

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատ 33 146.2 խ. մ կամ 53 033.92 տոննա:

53 033.92 տոննա / 240 ժամ = 220.97 տ/ժ

$Q=(0.05 \times 0.02 \times 1.8 \times 1 \times 0.6 \times 0.1 \times 0.6 \times 220.97 \times 10^6) / 3600 = 2.65 \text{ գ/վ}$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$2.65 \text{ գ/վ} \times 240 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ} / 10^6 = 2.291 \text{ տ/շինարարություն}$

86. Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի զբոսայգու սահմաններից դուրս՝ հաշվի առնելով փոշու մասնիկների մեծ չափերը և դրանց արագ գրավիմետրիկ նստելու հատկությունը: Մթնոլորտի գետնամերձ շերտում նշված արտանետումների հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում (ԲՄԿՊ) ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես՝

- շինարար կապալառուն հողային աշխատանքների ընթացքում կիրականացնի շինարարական մակերեսների ջրցանում և փոշենստեցման միջոցառումներ,
- հողային հանույթի տեղափոխման գործողություններում շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ,

– փոշի առաջացնող հողային հանույթը շինարարական տեղամասում կպահվի պաստառներով ծածկված վիճակում, աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

87. Վերը նշված մեղմացնող միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացման դեպքում գնահատվում են, որ մթնոլորտի գետնամերձ շերտում փոշու մասնիկների մակարդակները չեն գերազանցի ՀՀ ՍԹԿ-ները, իսկ օդային ավազանի պաշտպանությանն ուղղված միջոցառումների համալիր ցանկը ներկայացվում է ԲՄԿՊ-ում՝ *Հավելված 1*. (տես 2 ենթաբաժին, «Շրջակա միջավայրի պահպանության պլան»՝ Մթնոլորտային օդի աղտոտում և փոշու կառավարում:

88. Ծրագրի շրջանակում փոշու մակարդակի չափումները նախատեսվում է իրականացնել հանրության կողմից բողոքների կամ մոնիտորինգային այցելությունների ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում:

#### **4.10.2. Աղմուկի և թրթռումների մակարդակների աճ**

89. Զբոսայգու վերակառուցման աշխատանքների ընթացքում շինարարական տեխնիկայի շահագործումը կբերի աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացման, սակայն հաշվի առնելով աշխատանքների բնույթը, ծավալը և տևողությունը վերջիններիս մակարդակները գնահատվում են ՀՀ գործող նորմերի տիրույթում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում, իսկ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 14:00-ից 18:00:

90. Շինարարական գործողությունների ընթացքում առաջացող հնարավոր թրթռումների դեպքում ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով հարևան ազդակակիրների ամենամոտ հեռավորությունը զբոսայգու տարածքից ( $\geq 100$ մ):

91. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ Ծրագրի շրջանակում տեղանքի ֆիզիկական միջավայրին հասցրված ցանկացած վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին, բերելով այն իր նախնական վիճակին:

92. Ըստ անհրաժեշտության՝ կիրականցվեն նաև աղմուկի մակարդակի չափումներ, հանրության կողմից բողոքների կամ մոնիտորինգային այցելությունների ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում:

93. Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են ԲՄԿՊ-ում՝ *Հավելված 1*. (տես 2 ենթաբաժին, «Շրջակա միջավայրի պահպանության պլան»)՝ Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

#### **4.10.3. Զբոսագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացում**

94. Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինարարական մակերեսների ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

95. Զբոսայգու տարածքի հողային համահարթեցման աշխատանքների և ենթակառուցվածքների մոնտաժային աշխատանքների ընթացքում առաջացած փոշու

մասնիկների մակարդակները և տարածումը կնվազեցվի ջրցանի միջոցառման իրականացմամբ:

96. *Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.*

$$V = S \times K \times T \times K_1$$

որտեղ՝

S – զբոսայգու տարածքի մակերեսն է՝ 72 642. 17ք. մ

K – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 խ. մ,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝ 22 օր x 6 ամիս = 132 օր

K<sub>1</sub> - ջրցանի օրական քանակը՝ 1

Այսպիսով՝  $V = 72\ 642.17 \times 0.0015 \times 132 = 14\ 383.1$  խ. մ / շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 14 383.1 խ. մ:

97. *Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.*

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝

n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է՝ 3 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 խ. մ,

n<sub>1</sub> - բանվորների թիվն է՝ միջին 12 մարդ

N<sub>1</sub> - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 խ. մ/մարդ օր

T – աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում ամբողջ շինարարության ժամանակ՝ 22 օր x 6 ամիս = 132 օր :

Այսպիսով՝  $W = (3 \times 0.016 + 12 \times 0.025) \times 132 = 45.936$  խ. մ / շինարարություն ժամանակ կամ 0.348 խ. մ / օրական:

98. Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը նախատեսվում է վերցնել զբոսայգու տարածքին կից անցնող համայնքային ջրազծից:

99. Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ տեղամասին կից չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ, իսկ Ախուրյան գետը բավականին հեռացված է տարածքից: Անուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները և արտահոսքերը:

100. Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում՝ հաշվի առնելով դրանց բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված տեղամասում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից: Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա ( $\geq 5$  խ. մ տարողությամբ), որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոզեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

#### ***4.10.4. Շին թափոնների առաջացում և կառավարում***

101. Զբոսայգու վերակառուցման աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժման աշխատանքների ընթացքում կառաջանան IV դասի վտանգավորությամբ շին թափոններ, ինչպես նաև  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ



գնահատվում են բանեցված շարժիչային յուղերի և կենցաղային թափոնների առաջացում: Վտանգավոր թափոնների տեսակային կազմը, բնութագրերը (բն. նախարարի N430Ն հրամանի հավելված, 25 դեկտեմբեր, 2006թ) և ծավալները բերվում են (Աղ. 5).

**Աղ. 5 Վտանգավոր թափոնների կազմը, բնութագրերը և քանակները:**

Թափոնի անվանումը	Ծածկագիրը	Վտանգավորության դասը	Քանակը
«Շենքերի քանդումից առաջացած շին աղբ»	91200601 01 00 4	IV	1347.9 խ. մ/շին
«Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»	91200400 01 00 4	IV	≤ 5 կգ/օր
«Սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ»	54101100 02 03 3	III	≤ 25 լ/շին
«Բանեցված շարժիչի յուղերի թափոններ»	54100201 02 03 3	III	

102. Ծինությունների ապամոնտաժումից առաջացած շին թափոնների կառավարումը կիրականացվի ՀՀ կառավարության N 30 արձանագրային որոշման համաձայն, այն է կտեղափոխվի և կթափոնակույտվի Գյումրու համայնքապետարանի կողմից թույլատրված վայր՝ «Մուշ2» թաղամասի հարևանությամբ գտնվող խորխորատ (Հավելված 4):

103. Ընդհանուր առմամբ զբոսայգու հողային համահարթեցման աշխատաքների հետևանքով հեռացվող և հետագա օգագործման համար ոչ պիտանի գրունտի ծավալը գնահատվում է 31 893.71 խ. մ, որը ևս կտեղափոխվի և կթափոնակույտվի «Մուշ2» թաղամասի հարևանությամբ գտնվող խորխորատում:

104. Գործունեության ընթացքում գոյացած կենցաղային աղբը կհավաքվի հրապարակում տեղադրվող կենցաղային աղբի համար նախատեսվող տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ:

105. Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդային քանակները կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քայլուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մատաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

106. Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական շարժական մեքենասարքավորումների վառելիքի լիցքավորումը և քայլուղման գործողությունները հնարավորինս կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի նվազեցվի հրապարակում հեղուկ նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը և կրճատվեն/կառավարվեն հեղուկ թափոնների մնացորդային քանակները ներկայացվող գործունեության ընթացքում:

107. Թափոնների կառավարման միջոցառումների համալիր ցանկը բերված է ԲՄԿՊ-ում՝ *Հավելված 1*. (6. Ենթաբաժին՝ «Թափոնների և նյութերի կառավարման պլան»):

#### **4.10.5. Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացնող միջոցառումներ**

108. Ներկայացվող գործունեության ընթացքում տարածքից կհեռացվի 31 893.71 խ.մ ծավալով հողային հանույթ: Վերջինս գնահատվում է հետագա շին-գործողությունների համար ոչ պիտանի և կտեղափոխվի Գյումրու համայնքապետարնի կողմից տրամադրված աղբահանության տեղեկանքի համաձայն (*հավելված 4*):

109. Տեղամասում մնացած բուսահող<sup>1</sup> երկար տարիներ աղտոտված է եղել կենցաղային և շինարարական թափոններով, ուստի ներկայացվող գործունեության բարեկարգման աշխատանքների ընթացքում վերջինիս չի նախատեսվում օգտագործել: Այն նույնպես նախատեսվում է հեռացնել, տեղափոխել և թափոնակույտել համայնքային աղբավայրում:

110. Շինարարական աշխատանքների ընթացքում կրացառվեն հողային համակարգերի վրա այլ անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են՝ շինաղբի տեղադրում կամ կեղտաջրերի հեռացում: Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա (≥5 խ. մ տարողությամբ), որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

111. Շինարարական տեղամասում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մատաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կրացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի հնարավոր աղտոտման ռիսկերը:

112. Նախատեսվող գործունեության ընթացքում ինչպես նշեց 106 պարագրաֆում մեքենա-սարքավորումների լիզբավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հնարավորինս կիրականցվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի շրջակա միջավայրի վրա հեղուկ նյութերի արտահոսքով պայմանավորված ազդեցությունները և ռիսկերը:

113. Բնահողի պահպանմանն ուղղված միջոցառումները վերված են ԲՄԿՊ-ում՝ *Հավելված 1. (2. Ենթաբաժին՝ «Շրջակա միջավայրի պահպանության պլան»՝ Բուսահողի պահպանում և կառավարում):*

<sup>1</sup> Բու սահողի քանակը ներառված է հեռացվող հողայ ին հանույ թի ծավալ ու մ, սեա պրոսգրաֆ 51:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒՄԻ ԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

**4.10.6. Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումներ**

114. Ինչպես նշվեց 6.1 ենթաբաժնում, այգու բուսականությունն արդեն իսկ տարիների ընթացքում ենթարկվել է մարդածին ազդեցության, ինչի հետևանքով տարածքը վերածված է բազմակի հատված ծառաթփային բուսականության կոճղաշիվային մացառուտի: Ներկայումս տարածքում առկա են տաս ծառերից, որոնցից միայն վեցն են նախատեսվում պահպանել, իսկ մնացած չորս ծառերը եթակա են հեռացման:

115. Փուլ 1-ի շրջանակում նախատեսվում է բազմամյա խոտաբույսերի տնկում՝ շուրջ 58 000 ք. մ մակերեսով տարածք: Նշված աշխատանքների համար նախատեսվում է 13 000 խ. մ ծավալով բուսահողի մատակարարում (տեղեկանքը կտրամադրվի Գյումրի համայնքապետարանի կողմից):

116. Հետագայում Ծրագրի իրականացման փուլ 2-ի շրջանակում նախատեսվում է իրականացնել զբոսայգու տարածքի ծառերով և թփերով կանաչապատման աշխատանքներ:

**4.10.7. Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ**

117. Գործունեության ընթացքում կանխատեսվում են շինարարական մեքենա-սարքավորումների շարժով պայմանավորված երթևեկության ծանրաբեռնվածություններ: Նշված ազդեցությունները կմեղմացվեն շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժը կազմակերպելով շարասյուններով, սահմանափակ արագությամբ ( $\leq 30$  կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժը կկազմակերպվի նվազագույնը 30 րոպե ինտերվալով, ըստ անհրաժեշտության կիրականցվեն/կապահովվեն հետիոտնային անցուղիներ

շինհրապարակի հարևանությամբ՝ բացառելու համար հետիոտնային տեղաշարժի հետ կապված անհարմարությունները:

118. Ըստ անհրաժեշտության շինարար կապալառուն համայնքի հետ համատեղ կմշակի երթևեկության կառավարման պլան (ԵԿՊ), որտեղ կսահմանվեն քաղաքում երթևեկության ուղիները, անվտանգության միջոցառումները, մեքենաների թույլատրելի արագությունը և այլն միջոցառումներ:

119. Հրապարակը լքելիս կիրականացվի մեքենաների անվադողերի լվացման և մաքրման միջոցառումներ, որպեսզի բացառվի հանրային ճանապարհների վրա ցեխի և փոշու տարածման ռիսկերը: Նշված ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են ԲՍԿՊ-ում՝ *Հավելված 1. (4. ենթաբաժին, «Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան»):*

#### **4.10.8. Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

120. Ծրագիրը մեծ անդրադարձ է կատարում հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին շինհրապարակում, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

121. Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲՍԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (տես ԲՍԿՊ՝ *Հավելված 1.*):

#### **4.10.9. Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները** «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

122. Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

123. Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և դեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:
- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության ապա անհրաժեշտության դեպքում նաև կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:
- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:
- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

124. Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

#### **4.10.10. Սոցիալ տնտեսական ազդեցությունը**

125. Ծրագիրը կունենա դրական սոցիալական և տնտեսական ազդեցություն համայնքի բնակչության համար: Դրական ազդեցությունները ներառում են բարեկարգված զբոսայգի և ենթակառուցվածքների առկայություն, դեպի քաղաք տուրիստական հոսքի ավելացումը:

126. Ծրագրի ուղղակի շահառու են հանդիսանում Գյումրի համայնքի բնակիչները (157,332 բնակիչ), իսկ անուղղակի շահառուներն են քաղաք այցելող ներքին և միջազգային զբոսաշրջիկները: Ծրագրի իրականացման դրական սոցիալ-տնտեսական ազդեցություններից է նաև ժամանակավոր աշխատատեղերի ստեղծման հեռանկարը:

127. Չեն գնահատվում բացասական սոցիալական ազդեցություն բնակչության համար, քանի որ Ծրագրի ներքո մասնավոր հողերի կամ բնակչությանը պատկանող

անշարժ գույքի ժամանակավոր և մշտական օգտագործում կամ օտարում չի նախատեսվում:

128. Շինարարության ողջ ընթացքում կապահովվի շինտեղամասին հարակից փողոցների շահագործումը, հետիոտնային տեղաշարժի ուղիներ, իսկ Ծրագրի շրջանակում կանխատեսվող անհարմարությունները և ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ՝ հաշվի առնելով աշխատանքների փոքր ծավալը և տևողությունը:



## 5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

129. Ներկայացվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին կապահովվի զբոսայգու վերակառուցման աշխատանքների բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, նախաշինարարություն, շինարարություն և շահագործում) բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՄԿՊ) ակտիվ և արդյունավետ իրականացմամբ: ԲՄԿՊ-ի պատշաճ մակարդակով իրականացումը կկանխարգելի և/կամ կնվազեցնի գործունեության ընթացքում կանխատեսվող անցանկալի բացասական ազդեցությունները և ռիսկերը շրջակա միջավայրի վրա:

130. ԲՄԿՊ -ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական շինարար կապալառուն պատասխանատու է լինելու ԲՄԿՊ-ով սահմանված միջոցառումների իրականացման համար:

131. Նախատեսվող գործունեության շրջանակում մշակված ԲՄԿՊ-ն ներկայացված է *Հավելված 1.* -ում: Ծրագրի շրջանակում շրջակա միջավայրի պահպանման, աշխատանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված *հիմնական* միջոցառումները ամփոփ բերվում են ստորև .

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարարական աղբի և ավելորդ գրունտի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր

- հրապարակում կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամանների տեղադրում և կանոնավոր հեռացում հասարակական աղբաման՝ պահպանելով հրապարակի մաքրությունը
- շինարարական մակերեսների պարբերաբար ջրցանում և փոշու արտանետումների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում
- շինարարական հրապարակը լքելիս կիրականացվեն մեքենաների անիվների լվացման/մաքրման միջոցառումներ
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ, իսկ մեքենաների իրար հաջորդող տեղաշարժը կիրականացվի առնվազն 30ր ինտերվալով
- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային՝ 14.00-18:00
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի անթափանց հիմքերի (բետոնե, մետաղական կամ ավազե հիմքեր) վրա
- շինարարական նյութերի ձեռք բերում կիրականացվի լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ Գյումրու համայնքին մոտակա հանգույցներից
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կտեղադրվեն հրապարակի տեսանելի վայրերում
- կիրականացվեն շինարարակն հրապարակում աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտներով և կապավեն այլ պաշտպանիչ միջոցներով՝ ըստ անհրաժեշտության

– մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը հիմնականում կկազմակերպվի շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում

Վերը նշված միջոցառումների ծախսերը, ինչպես նաև ԲՄԿՊ-ով նախատեսվող միջոցառումները հաշվի են առնված նախագծի ծավալաթերթերում:

## **6. Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մոնիտորինգային պլան**

132. Ներկայացվող գործունեության իրականացման ամբողջ ընթացքում գործելու է բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մոնիտորինգային ծրագիրը, որի շրջանակում բնապահպանական և սոցիալական մեղմացման միջոցառումների (տես *Հավելված 1.*) վերահսկողությունը կիրականացվի շինարարական աշխատանքները համակարգող կազմակերպության կողմից մշտադիտարկման (մոնիտորինգ) միջոցով՝ ամսական կտրվածքով (նվազագույնը մեկ անգամ) գործունեության ընթացքում տեղամաս այցելությունների իրականացմամբ: Բնապահպանական և սոցիալական մասնագետների կողմից ցանկացած նշանակալի խնդիրների ի հայտ գալու դեպքում պատասխանատու կլինեն ղեկավար կազմին տեղյակ պահելու և համապատասխան միջոցառումների առաջարկներ ներկայացնելու համար: Ենթաձրագրի գործողությունների ներքո շինարարության և շահագործման փուլում բնապահպանական և սոցիալական երաշխիքների ապահովման մոնիթորինգային պլանը ներկայացված է *Հավելված 2-ում*:

133. Բնապահպանական և սոցիալական երաշխիքների ամենօրյա մոնիտորինգը կիրականացվի տեխնիկական վերահսկում (ՏՎ) իրականացնող կազմակերպության կողմից, ում ներկայացուցիչը մշտապես ներկա կգտնվի բարեկարգվող տեղամասում և կկազմի ամսական բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի

հաշվետվություններ: Այդ հաշվետվությունները կհամալրվեն համապատասխան լուսանկարներով և կներկայացվեն շինաշխատանքների պատվիրատուին:

134. Հատուկ ուշադրություն կդարձրվի աշխատանքներն իրականացնող շինարարական կազմակերպության/ների կողմից բնապահպանական և սոցիալական մեղմացնող միջոցառումների իրականացմանը, նկատված անհամապատասխանության վերացման նկատմամբ վերահսկողությանը՝ մոնիտորինգային այցելության ընթացքում նման անհամապատասխանության հայտնաբերմամբ և արձանագրմամբ: Կկազմվեն ամսական հաշվետվություններ, որտեղ նույն տեղամասի վերաբերյալ հաջորդ ամսվա մոնիտորինգային հաշվետվությունը կպարունակի համառոտագիր սահմանված անհամապատասխանությունների վերացման աշխատանքների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ: ԲՄՄՊ-ի հետ նկատելի անհամապատասխանության դեպքում կսահմանվի անհամապատասխանության վերացման միջոցառումների իրականացման վերջնաժամկետ և տեխնիկական վերահսկող խորհրդատուն կհետևի դրանց իրականացման ընթացքին: Անհամապատասխանությունը չվերացնելու կամ կրկնվելու դեպքում շինարարական աշխատանքների պատվիրատուի կողմից կսահմանվեն պայմանագրով նախատեսված պատժամիջոցներ շին-կապալառուի նկատմամբ:

135. Ենթաձրագրի ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվում փոշու և աղմուկի մակարդակի չափումներն իրականացնել մոնիտորինգային այցելությունների ժամանակ *ակնադիտական զննումների ընթացքում նկատված անհամապատասխանությունների, ազդակիր կողմերի կողմից համապատասխան բնույթի զանգատների և բողոքների առկայության դեպքում*, ինչպես նաև Գյումրի քաղաքում գործող *օդի որակի ստացիոնար* կայանում մշտադիտարկվող փոշու մասնիկներին բնորոշ կոնցենտրացիաների մեծացման դեպքում: Մթնոլորտային օդում աղտոտիչների ուսումնասիրությունների անհրաժեշտության դեպքում շինարարական

աշխատանքների պատվիրատուն պայմանագրային հիմունքներով կհամագործակցի մասնագիտացված լաբորատորիայի հետ և կհատկացնի անհրաժեշտ գումար աշխատանքների իրականացման համար:

## 9. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

136. Երջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության առաջին փուլի շրջանակում իրականացվել է Ծրագրի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը *ս.թ.* հունիսի 26-ին ժամը 15:00-ին, Գյումրու համայնքապետարանի շենքում (քաղաք Գյումրի, Վարդանանց հր. 1):

137. Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հանրային ծանուցման գործող ընթացակարգին համաձայն (հանրային քննարկումը անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ): Քննարկման մասին հայտարարությունը (նկ.6) տեղադրվել է Գյումրու համայնքապետարանի և «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի պաշտոնական կայքում ([www.gyumricity.am](http://www.gyumricity.am), [www.idea.am](http://www.idea.am)):

138. Հանրային քննարկման մասին արձանագրությունը կներկայացվի սույն հաշվետվությանը կից, իսկ մասնակիցների ցանկը (1 էջ) ներկայացվում է *Հավելված 8-ում*:

**Նկ . 6**  
**մասի ն**

**Հանրային քննարկման**



*հ այ տարար ու թյ ու ն ը «Հ այ սս տան ի Հ ան ր սպե տո ո թյ ո ո ն »  
ո ր աթ ե ր թ ո ո մ, տպագ ր վ ած 12.06.2020 հ ամ ար ո ո մ:*

## 10. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
2. ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
3. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
4. ԵՄ 2015: Ախուրյան ջրավազանային կառավարման պլանի նախագիծ: [http://aarhus.am/Announcements/Akhuryan%20RBMP%20March%2015,%202015\\_A RM.pdf](http://aarhus.am/Announcements/Akhuryan%20RBMP%20March%2015,%202015_A RM.pdf)
5. Տեղեկագիր: ՀՀ շրջակա միջավայրի մասին: Երևան: 2019թ. : <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Ann ual-19.pdf>



# 11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## 11.1. Հավելված 1. Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների կառավարման պլան (ԲՄԿՊ)

Մեղմացնող միջոցառումներ			
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
<b>ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՒԼ</b>			
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն	Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացում և դրական եղրակացության ձեռք բերում:	– Մշակվել զբոսայգու վերակառուցման գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցության նախնական գնահատման հայտը և ներկայացվելու է ՀՀ ՇՄՆ պետական փորձաքննության փորձաքննական եզրակացություն ձեռք բերելու նպատակով:	«Գողթն» ՍՊԸ
2. Հանրային լսումներ և հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են ազդել զբոսայգու վերակառուցման աշխատանքների ժամկետների վրա:	– Ծրագրի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը իրականացվել է Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում սույն թվականի հունիսի 26-ին: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 12/06/2020թ. համարում: – Երկրորդ հանրային քննարկումը տեղի կունենա ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող պետական փորձաքննության շրջանակում:	Idea հիմնադրամ, «Գողթն» ՍՊԸ
<b>ՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ՝ ՓՈՒԼ.1)</b>			
<b>1.Առողջության և աշխատանքային անվտանգության պլան</b>			
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	Վերակառուցման գործընթացի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շին առարկաների ոչ ճիշտ դասավորվածությունը և շինհրապարակի ոչ ճիշտ	– Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: – Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար,	Կապալառու  Կապալառու



	<p>կազմակերպումը կարող են առաջացնել աշխատանքի և առողջության անվտանգության խնդիրներ:</p>	<p>մասնավորապես տարածքի ցանկապատում, ստեղծել պահակակետեր, տեղադրել ցուցանակներ, արգելող պաստառներ այլ:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է ապահովել <b>կրակմարիչի առկայությունը</b> և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հատվածներում:</li> <li>- Անհրաժեշտ է ապահովել <b>առաջին բուժ օգնության դեղատուփի</b> առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</li> <li>- Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի <b>սեզոնային արտահագուստով</b> և այլ <b>անձնական պաշտպանիչ սարքավորումով</b>:</li> <li>- Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՔԿ-ին:</li> <li>- Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ <b>աշխատանքի անվտանգության հրահանգավորում</b>՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման իրադարձությունը պատշաճ պետք է գրանցել գրանցամատյանում:</li> <li>- Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<p><b>2. Շրջակա միջավայրի պահպանության պլան</b></p>			
<p>5. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները. պամոնտաժման և կառուցման աշխատանքներ, շինանյութերի և շինաղբի փոխադրումներ, և այլն:</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Փոշու և այլ ծխագազերի արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուման հետևանքով, ապամոնտաժման գործողություններից:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• <b>Մթնոլորտային օդի աղտոտման և փոշու կառավարում</b></li> <li>- Անհրաժեշտ է շինհրապարակում պարբերաբար իրականացնել <b>ջրցանման և փոշենստեցման միջոցառումներ</b>:</li> <li>- Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և սորուն նյութերը պահել <b>պաստառներով ծածկված</b> վիճակում՝ փոշու հնարավոր տարածումը բացառելու համար:</li> <li>- Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

	<p>– Աղմուկի թրթռումների մակարդակի աճ շին աշխատանքների ընթացում:</p> <p>և</p> <p>– Տիրաձեռում առաջացնող գործողություններն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին <b>14:00-18:00:</b></p> <p>– Բոլոր մեքենա-սարքավորումները պետք է ապահովված լինեն համապատասխան <b>խլացուցիչներով:</b></p> <p>– Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքինության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:</p> <p>– Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և չչ թույլատրելի նորմերի մակարդակներում:</p> <p>– Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան <b>ԱՊՄ-քով</b>, այդ թվում՝ ականջակալներով:</p> <p>• <b>Բուսականության պահպանում և կառավարում</b></p> <p>– Անհրաժեշտ է տարածքում առկա պահպանվող բուսականությունը պաշտպանել շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ</p>	<p>մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը:</p> <p>• <b>Աղմուկի և թրթռումների կառավարում</b></p> <p>– Շին հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին:</p> <p>– Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողությունների ընթացքում մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակալիչների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը:</p> <p>– Աղմուկ առաջացնող գործողություններն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին <b>14:00-18:00:</b></p> <p>– Բոլոր մեքենա-սարքավորումները պետք է ապահովված լինեն համապատասխան <b>խլացուցիչներով:</b></p> <p>– Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքինության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:</p> <p>– Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և չչ թույլատրելի նորմերի մակարդակներում:</p> <p>– Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան <b>ԱՊՄ-քով</b>, այդ թվում՝ ականջակալներով:</p> <p>• <b>Բուսականության պահպանում և կառավարում</b></p> <p>– Անհրաժեշտ է տարածքում առկա պահպանվող բուսականությունը պաշտպանել շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
	<p>– Տարածքում աճող բուսականության վրա ազդեցություն, մասնավորապես թվով 6 ծառեր նախատեսվում են</p>	<p>– Անհրաժեշտ է տարածքում առկա պահպանվող բուսականությունը պաշտպանել շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ</p>	<p>Կապալառու</p>

	<p>պահպանել:</p> <p>Վերակառուցման աշխատանքների ընթացքում բնահողի մատակարարման գործողություններ, Զբոսայգու հողային համակարգերի վրա ազդեցություն չինաշխատանքներից:</p>	<p>ազդեցություններից:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Ըստ անհրաժեշտության իրականացնել ազդեցության ենթարկվող բուսականության <b>պաստառապատում, ջրցանում՝ փոշու</b> տարածքումը և ազդեցությունները նվազեցնելու նպատակով:</li> <li>- Անհրաժեշտ է ապահովել տարածքում բուսականության <b>ռոտզման միջոցառումները շին աշխատանքների ընթացքում:</b></li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել միայն ծառաբանի եզրակացությամբ նախատեսվող ծառերի (4 հատ ծառ) հատման գործողությունները և խուսափել տարածքում պահպանվող որևէ ծառերի հատումից:</li> <li>- Վերատնկման աշխատանքներից առաջ նախապես իրականացնել ծառերի էտում և փոսորակների մշակման գործողությունները:</li> <li>- Անհրաժեշտ է բացառել տարածքից հեռացվող բուսականության այրումը:</li> </ul> <p><b>• Բնահողի պահպանում և կառավարում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է տարածքի համահարթեցման համար անհրաժեշտ բնահողի մատակարարումը իրականացնել համայնքապետարանի տեղեկանքի համաձայն (<i>Հավելված 4</i>):</li> <li>- Անհրաժեշտ է հրապարակում պահել <b>կեղտաջրերի հեռացման համար նախատեսված (≥5 խ. մ) տարա</b>, հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու/ համայնքապետարան</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու,</p> <p>Կապալառու</p>
<b>3. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան</b>			
<p>7. Շին հրապարակի կազմակերպում:</p>	<p>Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա:</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես զբոսայգու տարածքի ներսում բացառելով այլ ազակակիր տարածքների օգտագործումն առանց համապատասխան թույլտվության:</li> <li>- Անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակը հրապարակի կազմակերպման սխեմային համաձայն ապահովելով <b>նախատեսվող մուտքերը և ելքը:</b></li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր <b>անթափանցելի մետաղական ցանկապատում</b> ողջ շին-հրապարակի պարագծով:</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</li> <li>- Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների <b>ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը</b> կանխելու նպատակով:</li> <li>- Անհրաժեշտ է նախքան շինհրապարակից հեռանալն ապահովել <b>անվադողերը մաքրելու միջոցառումներով</b> (աշխատանքային տեղամասում <b>կոպճային մակերևույթների</b> և անիվների <b>վազման միջոցառումներ</b>) շինարարական փոշին ու ցեխի տարածումը կանխելու համար:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>4. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան</b>			
<p><b>8.</b> Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Երթևեկության խափանումներ</li> <li>- Երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ</li> <li>- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ</li> <li>- հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում</li> <li>- շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնասի պատճառում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</li> <li>- Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով:</li> <li>- Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</li> <li>- Անհրաժեշտ է ապահովել <b>բեռնատարների ծածկով երթևեկումը</b> շինհրապարակը լքելիս:</li> <li>- Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի <b>արդյունավետ կլանիչներով և խլացուցիչներով:</b></li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է դադարեցնել <b>արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը</b> և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</li> <li>- Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել <b>անվադողերը մաքրելու միջոցառումներով</b> (աշխատանքային տեղամասում <b>կոպչային մակերևույթների</b> և անիվների <b>լվացման միջոցառումներ</b>) շինարարական փոշին ու ցեխի տարածումը կանխելու համար:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>5. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան</b>			
<p><b>9.</b> Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակներ, դժբախտ պատահարներ և այլն</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ և շրջակա միջավայր:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում:</li> <li>- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրում:</li> <li>- Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին:</li> <li>- Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</li> <li>- Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:</li> <li>- Քիմիական և այլ վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		<p>տարածքում, որն ապահովված է անանցանելի/ անթափանց հատակով և պատնեշով:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</li> <li>- Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՔԿ-ին հաշվետվության ձևով:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>6. Թափոնների և նյութերի կառավարման պլան</b>			
<p><b>10.</b> Շինարարական և շինարարական աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ, բուսահող ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք պոտենցիալ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է շինարարական աղբը հեռացնել բացառապես համայնքապետարանի թույլատրված <b>աղբավայր (Հավելված 4)</b> :</li> <li>- Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինարարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար:</li> <li>- Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր դրանց առաջացման դեպքում:</li> <li>- Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում:</li> <li>- Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</li> <li>- Հրապարակում նախատեսել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսված աղբաման, իսկ այնուհետև հավաքված աղբը հեռացնել հասարակական աղբաման:</li> <li>- Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինարարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

		<p>աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է հրապարակում պահել <b>կեղտաջրերի (բետոնաջուր, և այլն)</b> հեռացման համար նախատեսված (≥5 խ. մ) տարա, որտեղ նստվածքի մեխանիկական նստեցումից հետո ջուրը հնարավոր կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ ջրի գոլորշացումից հետո նստվածքը/չոր մնացորդը հեռացնել աղբավայր:</li> <li>- Հեղուկ վառելիքի կամ յուղանման նյութերի տարաները անհրաժեշտ է պահել <b>անթափանց հիմքերի (բետոնե, մետաղական կամ ավազե)</b> վրա՝ հողային շերտի վրա հնարավոր արտահոսքերը կառավարելու նպատակով:</li> <li>- Անհրաժեշտ է սպառողական հատկությունները կորցրած յուղի թափոնները հավաքել հերմետիկ տարայում, պահել հրապարակում՝ ըստ վերը նկարագրված կարգի, և հետագայում հանձնել լիցենզավորված վերամշակողի:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>
<b>7. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան</b>			
<p><b>11. Շինհրապարակի վերականգնումը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն:</li> <li>- Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները:</li> <li>- Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը:</li> <li>- Անհրաժեշտ է իրականացնել ՊԱՏՎԻՐԱՏՈՒ-ի կողմից մշակված ընդունման- հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները:</li> </ul>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>

**11.2. Հավելված 2. Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մոնիտորինգի պլան**

Գործողություն	Ինչ (Պե՞տք է իրականացնել տվյալ ցուցանիշի մոնիտորինգ)	Որտեղ (Պե՞տք է իրականացնել տվյալ ցուցանիշի մոնիտորինգ)	Ինչպես (Ի՞նչ եղանակով է պետք իրականացնել նտվյալ ցուցանիշի մոնիտորինգը)	Երբ (Մահմանել հաճախակա նությունը/ թե՞ անընդհատ)	Ինչու (Պե՞տք է իրականացնել տվյալ ցուցանիշի մոնիտորինգ)	Ով (ո՞վ է իրականացնում մոնիտորինգը)
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</b>						
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնումը լիցենզավորված մատակարարներից	Շինարար կապալառուի գրասենյակներում և/կամ պահեստներում	Փաստաթղթերի ստուգում	Նյութերի մատակարարման համաձայնագրի ստորագրման ընթացքում	Ապահովելու համար շինարարության տեխնիկական որակը, մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանումը	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխումը:  Շին տեխնիկայի և մեքենաների տեղաշարժը	Շին տեխնիկայի և մեքենաների տեխնիկական վիճակը:  Բեռնատար մեքենաների թափքի ծածկի ապահովումը  Շին տեխնիկայի և մեքենաների տեղաշարժումը նախապես սահմանված երթուղիով և	Շինտեղամաս մուտք և ելք և հարակից տարածք, աղբի հեռացման վայր	Մահմանված/ համաձայնեցված երթուղիների , շին տեղամասի մուտքի/ելքի, տարածքի զննում	Աշխատանքային ժամերին առանց նախապես զգուշացման այցելություն/ստուգումներ	Շրջակա միջավայրի արտանետումների կառավարում:  Աղմուկի և թրթռումների կառավարումը գործող նորմերին համապատասխան:  Հետիոտնային անցումների և անվտանգության և պատահարների	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ  ՏՎ



ԳՅՈՒՄՐԻԻ «ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ» ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ


	<p>աշխատանքային ժամերին (9:00-18:00).</p> <p>Երթևեկության կառավարման պլանը *(ԵԿՊ) կմշակվի շինարար կապալառուի և համայնքի հետ համատեղ:</p>				կառավարում	
Շինարարական թափոնների առաջացում	<p>Շին թափոնների պահում շինտեղամասի նախապես սահմանված վայրերում:</p> <p>Կանոնավոր հեռացում և պահում թույլատրված տարածք/աղբավայր</p>	Շինտեղամաս Թույլատրված տարածք/աղբավայր	Շին տեղամասի զննում	Պարբերաբար շինարարության ընթացքում առանց նախապես զգուշացման այցելություն/ստուգումներ	Շին տեղամասի և հարակից միջավայրի շին աղբի կուտակումների կանխարգելում	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՏՎ
Փոշու և աղմուկի մակարդակների կառավարում	<p>Փոշու մակարդակների կառավարում, ջրցանում միջոցառումներ</p> <p>Աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլտրելի նորմերի սահմանում և 9:00-18:00</p> <p>աշխատանքային ժամերին</p>	Շինտեղամաս	Ակնադիտական զննում Բողոքների առկայություն	Պարբերաբար շինարարության ընթացքում առանց նախապես զգուշացման այցելություն/ստուգումներ		ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՏՎ

ԳՅՈՒՄՐԻԻ «ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ» ԶԲՈՍԱՅԳՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

<p>Աշխատանքի և առողջության անվտանգության ապահովում:</p>	<p>Անձնկազմին համագգեստի և անվտանգության միջոցների ապահովում:</p> <p>Աշխատանքի անվտանգության հրահանգավորում:</p> <p>Անվտանգության սաղավարտների, ականջակալների օգտագործում :</p>	<p>Շինտեղամաս</p>	<p>Շինտեղամասի զննում</p>	<p>Շինարարության ընթացքում ամսական այցելություններ</p>	<p>Պատահարների հավանականության և կանխում</p> <p>Առողջության և աշխատանքային անվտանգության ապահովում</p> <p>Աղմուկի և թրթռումների կառավարումը գործող նորմերին համապատասխան</p> <p>Թրթռումների ազդեցությունն բացառումը ֆիզիկական միջավայրի վրա:</p>	<p>ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՏՎ</p>
<p>Տարածքի վերականգնում</p>	<p>Շինտարածքից շին թափոնների հեռացում և տարածքի մաքրում</p>	<p>Վերականգնված տարածք</p>	<p>Վերականգնված տարածքի զննում</p>	<p>Հետ շինարարական փուլում</p>	<p>Ապահովել տարածքի</p>	<p>ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՏՎ</p>



11.4. Հավելված 4. Բնահողի մատակարարման և շինադրի հեռացման վայրերի վերաբերյալ տեղեկանք

  
**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Շ Ի Ր Ա Կ Ի   Մ Ա Ր Զ   Գ Յ Ո Ւ Մ Ր Ի   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Ի  
Ա Ռ Ա Ջ Ի Ն   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

---

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1  
Հեռ. (+374 312) 2-22-01, Ֆաքս (+374 312) 3-26-06  
Էլ. փոստ gyumri@gyumri.am

№ 02/02.2/9628-20  
28 « 07 » 2020թ.


Գյումրի քաղաքի Գ. Նժդեհի 1/1 հասցեում գտնվող  
վերակառուցվող <<Բարեկամություն >> զբոսայգու  
շինարարության ծրագրի ղեկավար  
Տիկին Ելենա Մուրադյանին

Հարգելի տիկին Մուրադյան

Ներկայացնում ենք Գյումրի քաղ. վերակառուցվող <<Բարեկամություն >> զբոսայգու  
շինարարության ընթացքում առաջացած շինարարական աղբի և պահանջվող  
քանակության բնահողի տեղափոխման գտնվելու վայրերի կոորդինատները.


1. Շինարարական աղբի տեղափոխման ու բեռնաթափման վայրի կոորդինատներն են՝  
հյուսիսային լայնություն - 40.816481  
արևելյան երկայնություն - 43.821406  
(Google-ի քարտեզում վայրը գտնվում է << Մուշ-2 >> թաղամասի հարևանությամբ  
գտնվող խորխորատ):
2. Բնահողի գտնվելու վայրի կոորդինատներն են՝  
հյուսիսային լայնություն - 40.777257  
արևելյան երկայնություն - 43.956883  
(Google-ի քարտեզում վայրը գտնվում է Կանոնտի բազալտի հանքավայրի  
հարևանությամբ):

Հ Ա Ր Գ Ա Ն Ք Ո Վ


 Ռ. Ս Ա Ն Ո Յ Ա Ն

ԿատՄանասյան  
0312 2 22 27

11.5. Հավելված 5. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան



11.6. Հավելված 6. Շինարարական աշխատանքների իրականացման հաջորդականությունը և ժամանակացույցը



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

11.7. Հավելված 7. Անշարժ գույքի սեփականության վկայական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԿԱՅԱԿԱՆ**  
ԱՆՇԱՐՉ ԳՈՒՅՔԻ ԿՎԱՏԱՄԱՐ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «19» Հունիսի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՑՎԱԾ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ ՈՒՐԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՐԳԱՅՄԱՆ ԱՍՏԱՇԵՆՈՒԹՅՈՒՆԵՐ ԲԱՆԳՈՐԾԱԿԱՆ ՀՄԻ

**2. ԱՆՇԱՐՉ ԳՈՒՅՔԻ ԳՏԿԵԼՈՒ ՎՅՅՐԿ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Երևան, համայնք Գյումրի ք. Գ. Լճիկի փողոց 1/1 գրասրահ

**3. ԳՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՐԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՎԱՏԱՊԵՏՆԵՐԸ**

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի տեղակալի 29/05/2019թ. թիվ 994-Ս որոշում, համայնքային սեփականություն հանդիսացող իրավանքի կտրու գրանցումն իրավունքի տրամադրման պայմանագիր՝ վավերացված 06/06/2019թ. գրանցամատյան թիվ 4093

**4. ՀՐԴԱՄԱՆ ԲԵՈՒՅՄԱՆ ԵՎ ՎՅՅՐԿԸ**

Կարգատրային ծանեագիրք՝ 08-001-1223-0081  
Մանրեմի չափը (հա)՝ 7,264217

Կարգատրային նշանակությունը՝ բնակավայրերի  
Գրանցման նշանակությունը կամ հորատնային՝ Ընդհանուր օգտագործման  
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՀՐԱՄԱՆ ԿՈՒՆՑԱՄԱՍՆ ԻՐԱԿՈՒՆՔ

Վկայական N 19062019-08-0034, գաղտնաբան՝ ZTSY2DPZAJAJ

Էջ 1

Show next page (Right Arrow)

**5. ԾԻՆՈՒՅՑՈՒՆԵՐԻ ԲԵՈՒԹՅՈՒՆԸ**

1) Կարգատրային նշանակությունը՝ Հասարակական  
2) Բնութագրերը՝ բառ առանձին շինություններ

Հ/հ	Կարգատրային ծանեագիրք	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հղումնառված ակտա է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի տեղակալությունը հանդիսացող 124.29ց.մ. մակերեսով շինություն:

Կարգատրային նշանակությունը պաշտոնապես ակտի ակտուց, ազգակույր՝ Կարեն Մանուկյան  
Սույն Անշարժ գույքի ռեգիստր

Վկայական N 19062019-08-0034, գաղտնաբան՝ ZTSY2DPZAJAJ

Էջ 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՍՏԱՇԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (IDeA) ՀԻՄՆԱԴՐԱՄ

11.8. Հավելված 8. Հանրային քննարկման մասնակիցների ցանկը

ՏՈՒՑԱԿ

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) իմնադրամի կողմից իրականացվող Գյուտերու Բարեկամության այգու վերակառուցման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման, քննարկման մասնակիցների ցանկ

Ը/Ի	Կազմակերպության անվանում, ֆիզիկական անձի Ա.Ա.Հ.	Հ ա ս ց ե	Հեռ.	ստորագրություն
1	Բ. զ. Գ. Խենթակցյան	Ա. Վաչե/Երզն	09313658	
2	Հենես Վարդապետյան	ԽԵՏ	.	
3	Սիլվա Վասիլյան	ԽԵՏ	.	
4	Գրիգոր Վարդապետյան	Սիլվա Վարդապետյան	097087133	
5	Գրիգոր Վարդապետյան	Սիլվա Վարդապետյան	097087133	